

ՏԻՐՈՒՆԻ

ԷԼԻԶ ՄԱՅՐԱՊԵՏ ՄՈՄՃԵԱՆ

Անցնող Մարտ 12ին, Երկուշարթի առաւտականութեան իր խուցին մէջ վախճանեցաւ Ա. Աթոռոյս տարեց մայրապետներէն էլիդ մայրապետ Մոմճեան, Երկարատեւ հիւանդութենէ մը ետք:

Հանգուցեալը ծնած է Ալյոթապ, 1893ին : Երուսաղէմ եկած է 1947ին և 1950 Մարտ 17ին ընդունուած Ա. Աթոռոյի մայրապետներու շարքին :

Էլիդ մայրապետ համբաւուած էր իրրեւ ձեռագործի նշանաւոր վարպետուհի : Բազմաթիւ եւ իր ձեռքերէն բանուած չուրջառները, վարադոյրները, դպիրներու շապիկները եւ այլն, որոնցմէ շատերը իր ձեռքը անցած զումարներով նուիրած է Ա. Յակոբեանց Տաճարին եւ այլ սրբավայրերու :

Հանգուցեալը իր կենդանութեան պատրաստել տուած էր իր տասկանաբարը, որ յուղարկաւորութեան օրը զետեղուեցաւ իր շիրմին վերիւ :

Նկատելով որ իր մահը զուգադիպած էր Մէծ Պահքի տուածին օրուան, որ ժառանգաւորաց Վարժարանի սաներուն եւ ուսուցիչներուն պատրիարքական օրը նկատուած է, թաղման կարգը յետաձգուեցաւ Երեքշարթի կէսօրէ Լորի, Ա. էջմիածին մատուուին մէջ : Մասնակցեցաւ բովանդակ Միարանութիւնը, զինաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի : Մարմինը ամփոփուեցաւ Ա. Փրկչի ազդ զերեքմանատան մէջ :

Հանգիստ իր յուղանատանջ մարմնին եւ յաւերժական լոյս իր բարի հողիին :

ՈՒՐԱՐԱԿԻՐ ՅՈՎԱՆԻ ԻՍԿԵՆԵԱՆ

15 Մայիս, Երեքշարթի զիշեր, իր յաւիտենական հանգիստը մտաւ Աւրարակիր Տիրացու Յովսիփ Խոկնեան, յառաջացեալ տարիքի մէջ : Մահը պատուհեցաւ Համբարձման լերան հիւանդանոցին մէջ, ուր փոխազրուած էր շարաթ մը առաջ :

Հանգուցեալը ծնած էր Ալյոթապ, 1894ին : Երուսաղէմ եկած է 1927ին և 40 տարիներ ծառայած Ա. Աթոռոյն իրրեւ միարան եւ լուսարար ի Ա. Հրեշտակապետ, Ա. Յարութիւն, Բեթղեհէմ եւ ամենէն ետքը ի Ա. Աստուածածին : Յառաջացեալ տարիքի բերումով, վերջին տարիներուն կոչուած էր հանգստան :

Հանգուցեալը ծառայասէր միարան մը եղած է, հաւատարմօրէն եւ եռանդագին նուիրումով կատարելով իր բոլոր պաշտօնները :

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Զորեքշարթի, 16 Մայիս, կէսօրէ Լորի ժամը 4ին Ա. էջմիածին մատուուին մէջ, նախագահութեամբ Լուսարարապետ Արքապան Հօր եւ մասնակցութեամբ Միարանութեան անդամներուն : Մարմինը ամփոփուեցաւ Ա. Փրկչի զերեքմանատան մէջ :

Հանգիստ իր յաւստանջ մարմնին և Երանաւէտ լոյս իր բարի հողիին :